

ՔԱՂՎԱԾՔ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

ք.Երևան,
Չարենցի 1բ թիվ 42

29.04.2016թ.
ժամը՝ 12:00

«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 24545 ընդհանուր քանակից (այդ թվում՝ 24525 սովորական և 20 արտոնյալ) բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էին 24545 ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը, որը կազմում է ձայների ընդհանուր քանակի 100 տոկոսը (բաժնետեր Ն.Գաբրիելյան՝ 12234, բաժնետեր Վ.Հարությունյան՝ 6186, բաժնետեր Հ.Գաբրիելյան՝ 3123, բաժնետեր Է.Գաբրիելյան՝ 1668, բաժնետեր Ա.Աբրահամյան՝ 1334):

Ժողովը նախագահում էր ընկերության խորհրդի նախագահ պրն. Ա.Հարությունյանը: Քարտուղար ընտրվեց Ն.Գաբրիելյանը: Հրավիրված էին խորհրդի անդամներ՝ գործադիր տնօրեն Ա.Դարբինյանը, Ա.Խաչատրյանը, «Աուդիտ Սթար» ՍՊԸ-ի աուդիտոր Ա. Մելքոնյանը և վերստուգող Է. Երոյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ-ի՝ 2015թ.-ի գործունեության արդյունքների ամփոփումը և հաստատումը:

Օրակարգի հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ տիկին Աննա Դարբինյանը: Տիկին Դարբինյանը իր ելույթում համառոտ ներկայացրեց 2015թ.-ի գործունեության հիմնական ցուցանիշները: Նա նշեց, որ վարկային կազմակերպության ընդհանուր ակտիվները 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 2.692.856 հազ ՀՀ դրամ: Ակտիվների զգալի մասը՝ 84.4%-ը կամ 2.274.177 հազ ՀՀ դրամ կազմում են վարկային ներդրումները և բանկերում տեղաբաշխված ավանդները: Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները կազմել են 6.6%-ը կամ 176.515 հազ ՀՀ դրամ: Այլ ակտիվները կազմել են ընդհանուր ակտիվների 6.1% կամ 165.691 հազ դրամ, որից բռնագանձված գրավի արժեքը կազմում է 164.830 հազ ՀՀ դրամ: Ընդհանուր ակտիվների աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 264.247 հազ ՀՀ դրամ կամ 10.9%:

Պարտավորությունները կազմել են 1.014.737 հազ ՀՀ դրամ: Նրանց կառուցվածքում զգալի մասը՝ 81.9% կազմում են մասնակիցներից ներգրավված փոխառությունները՝ 831.069 հազ ՀՀ դրամ, որից ԱՄՆ դոլարով ներգրավված փոխառությունները կազմում են՝ 809.580 հազ դրամ գումարին համարժեք: Աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 32.592 հազ ՀՀ դրամ կամ 3.3%:

Ընդհանուր կապիտալը 31.12.2015թ.-ի դրությամբ կազմել է 1.678.119 հազ ՀՀ դրամ, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 231.655 հազ ՀՀ դրամ կամ 16.0%: Կանոնադրական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 21.2%-ով կամ 214.885 հազ ՀՀ դրամով և կազմել 1.227.250 հազ ՀՀ դրամ:

Ֆինանսական տարին կազմակերպությունը ամփոփել է 231.670 հազ ՀՀ դրամ զուտ շահույթով, շահույթը մինչև հարկվելը կազմել է 285.680 հազ ՀՀ դրամ, որը 960.476 հազ ՀՀ դրամ Եկամուտների և 674.796 հազ ՀՀ դրամ Ծախսերի արդյունքն է: Եկամուտների զգալի մասն են կազմում տոկոսային եկամուտները 49% կամ 467.277 հազ ՀՀ դրամ, իսկ Ծախսերի գծով՝ մասհանումները պահուստաֆոնդին՝ 68%, կամ 455.507 հազ ՀՀ դրամ:

Զբաղիված շահույթը 31.12.2015թ. դրությամբ կազմել է 273.793 հազ. ՀՀ դրամ, որից՝ 42.123 հազ ՀՀ դրամը վերաբերում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության գծով վերագնահատմանը:

Տարվա ընթացքում տրամադրվել են առևտրային, հիփոթեքային և սպառողական վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ 15-24% տարեկան տոկոսադրույքով 6 ամսից մինչև 10 տարի մարման ժամկետով: Վարկերը տրամադրվել են ինչպես սեփական միջոցների հաշվին, այնպես էլ փոխառու՝ մասնակիցներից ներգրավված փոխառությունների հաշվին: Ներգրավված միջոցների տեսակետից կազմակերպությունը սակավություն չի ունեցել:

Վարկերը տրամադրելիս մեծ ուշադրություն է դարձվել հնարավոր վարկառուի բնութագրին, իրացվելի գրավների ընտրությանը, փաստաթղթերի պատշաճ ուսումնասիրմանը և ճշգրիտ ձևակերպմանը:

Աշխատակիցների միջին ցուցակային թիվը տարվա ընթացքում կազմել է 16 մարդ, միջին աշխատավարձը կազմել է 301.368 ՀՀ դրամ:

Իր ելույթում Ա.Դարբինյանը նշեց, որ չնայած 2015թ.-ի գործունեության դրական արդյունքներին դեռևս առկա են չլուծված խնդիրներ, որոնք իրենց լուծումը պետք գտնեն ընթացիկ տարում: Այսպես՝ հետհաշվեկշռում հաշվառված են թվով 22 «անհուսալի» վարկերը ընդհանուր ներկա արժեքով 230.768 հազ ՀՀ դրամ, այդ թվում վարկի մնացորդը կազմում է 134.278 հազ ՀՀ դրամ: 2015թ.-ին կազմակերպությունը ներկայացրել է դատական համակարգ ընդեմ վարկառուների 7 հայց: 2015թ.-ին ավարտվել է նախորդ տարիներից տեղափոխված 2 հայց, մեկ հայցը փակվել է 2015թ.-ին, իսկ մյուսները կշարունակվեն 2016թ.-ին: Մնացած վարկերը ունեն իրացվելի գրավներ, պետք է կատարվեն համապատասխան աշխատանքներ դրանց բնականոն մարումն ապահովելու ուղղությամբ:

Անցած տարվա ընթացքում վերանայվել և Խորհրդի հաստատման են նախապատրաստվել գործունեությունը կարգավորող թվով 8 նոր կարգերը և ընթացակարգերը, IT-ի ոլորտը կանոնակարգող 31 կարգ:

Գործադիր տնօրեն Աննա Դարբինյանն առաջարկեց 01.01.2016թ. դրությամբ կուտակված շահույթի հաշվին կատարել օրենքով սահմանված մասհանում գլխավոր պահուստին, որը կկազմի 13.680 հազ.

Ըստ էության արտահայտվեցին Արսեն Հարությունյանը և Արտուշ Աբրահամյանը: Նրանք առաջարկեցին 2015թ. ֆինանսատնտեսական գործունեությունը գնահատել դրական և հաստատել ֆինանսական հաշվետվությունները, հավանություն տվեց տիկին Դարբինյանի առաջարկին:

Նշված հարցերի քվեարկությանը մասնակցեցին ծայնի իրավունք տվող բոլոր սովորական բաժնետոմսերի (24525 բաժնետոմս) սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

Քվեարկությանը չի մասնակցել արտոնյալ բաժնետոմսերի (20 բաժնետոմս) սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

Ժողովը որոշեց՝

- 2015թ. ֆինանսատնտեսական գործունեությունը գնահատել դրական և հաստատել 2015թ. ֆինանսական հաշվետվությունները;
- 31.12.2015թ-ի դրությամբ առկա չբաշխված 273.793 հազ. ՀՀ դրամ շահույթի մինչև 5%-ը՝ 13.680 հազ. ՀՀ դրամ գումարի չափով ուղղել գլխավոր պահուստին:

Որոշումը ընդունվեց միաձայն:

Նախագահ՝	ստորագ.	Ա. Հարությունյան
Անդամներ՝	ստորագ.	Ն. Գաբրիելյան
	ստորագ.	Ա. Խաչատրյան
	ստորագ.	Ա. Դարբինյան